ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մեծ շուքով նշվեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը: Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Սուրբ Պատարագի ընթացքում, «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո, հանդիսավորապես Ավագ Սուրբ Խորան բարձրացվեց 1918 թ. մայիսյան հերոսամարտերի 90-ամյա հոբելյանին նվիրված Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Կոնդակի ընթերցումից հետո կատարվեց հոգեհանգիստ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի 1918 թ. մայիսյան հերոսամարտերում զոհված հայորդիների հոգիների խաղաղության համար:

Պատարագի սրբազան արարողության ավարտին կատարվեց մաղթանք Սուրբ Էջմիածնի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության և Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արևշատության համար:

Սուրբ Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ կառավարական հանձնախմբի անդամներ, բազմաթիվ հյուրեր և ուխտավոր հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ